

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

11.12.2013թ. -ին Վերին Արտաշատի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում,որը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Աշոտ Ղազարյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Ալվարդ Հակոբյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բուժամբույլատորիայի, մանկապարտեզի, դպրոցի, երաժշտական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Վերին Արտաշատի համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի հաշվետվությունը 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ 2013թ-ի ընթացքում Վ.Արտաշատ գյուղական համայնքում Կատարվել են հետևյալ աշխատանքները.

-Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 207 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

-Գյուղապետարանը բնակիչներին տրվել է 1106 տեղեկանք, ստացվել 62 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

-2013թ.-ի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանամաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

-2013թ.-ի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են`

ա/ հողի հարկ – 16000.0 միլիոն դրամ
բ/ գույքահարկ - 8552.0միլիոն դրամ
գ/ տեղական տուրքեր -419000 հազար դրամ
դ/ ոչ հարկային եկամուտներ - 1343.7 հազար դրամ
10.12.2013թ.-ի դրությամբ գանձվել է
ա/հողի հարկ 16 միլիոն դրամ 100%
բ/գույքահարկ 7879000 դ 92 .1%
գ/տեղական տուրք 419000դ 100%
դ/ոչ հարկային եկամուտներ 1166000դ 87 %

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր որոնցից են`

ա/ Համայնքում նշվել է մարտի 8-ը` կանանց միջազգային օրը, մայիսի 9-ը` Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը, Հայաստանի Հանրապետության տոներ
բ/ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 4300.0հազար դրամ
գ/ աղբահանման աշխատանքների կազմակերպման համար 1800.0 հազար դրամ
- Համայնքում իրականացվում է փողոցային լուսավորություն , որի համար տարեկան ծախսվում է մոտ 1100.0 հազար դրամ
- Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 20.0 միլիոն դրամ
-Համայնքի երաժշտական դպրոցին հատկացվել է 10.0 միլիոն դրամ
-Թաղման ծախսե 1.0 միլիոն դրամ
-Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների , ոռոգման ցանցի և խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման : Այդ նպատակով ձեռնարկվում են միջոցառումներ:

Վերին Արտաշատ համայնքի ղեկավար`



հազարյան